

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 30/2

19 հուլիսի 2012թ.

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 19.06.2012թ-ի նիստում քննության է առնվել «Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ 05.06.2012թ. գանգատը «ԿԱ ՊԵԿ ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության 31.05.2012թ. թիվ 1206922 արձանագրության դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ արձանագրությունը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես, համաձայն «ԿԱ ՊԵԿ նախագահի 08.05.2012թ. թիվ 1206922 հանձնարարագրի, «Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի՝ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած դեբետային մնացորդի ուսումնասիրություն: Արդյունքում 31.05.2012թ-ին կազմվել է թիվ 1206922 արձանագրությունը (այսուհետ նաև արձանագրություն), որով մասնավորապես արձանագրվել է հետևյալը:

«Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ կողմից ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների մասով 01.12.2011-29.02.2012թթ ընկած ժամանակաշրջանի համար 26.04.2012թ. ՀՏ ներկայացրած դիմումով հաշվանցման և (կամ) վերադարձման ԱԱՀ-ի գումարը կազմում է 168.645.246 դրամ: Համաձայն ԽՀՎ ՀՏ կողմից տրված դեբետային մնացորդների վերաբերյալ տեղեկանքի, ընկերության ԱԱՀ-ի դեբետային մնացորդը 27.04.2012թ. դրությամբ կազմում է 495.267.287 դրամ:

Ներկայացված սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում ընկերության ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների իրացման շրջանառությունը կազմում է 4.551.646.805 դրամ, որին հասանելիք (20% հաշվարկային) ԱԱՀ-ի գումարը, համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի, կազմում է 910.329.360 դրամ: Համաձայն 01.12.2011-29.02.2012թթ համար ընկերության կողմից ՀՏ ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկների, հաշվանցման (դեբետ) ենթակա ԱԱՀ-ի գումարը կազմում է 168.645.246 դրամ: Նշված գումարից «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի վերջին պարբերության համաձայն ենթակա չէ այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման 92.145.033 դրամ ԱԱՀ-ի գումարը:

Այսպիսով՝ ուսումնասիրվող ժամանակաշրջանում դիմումով պահանջված 168.645.246 դրամ ԱԱՀ-ի դեբետային մնացորդից ենթակա է սահմանված կարգով հաշվանցման և (կամ) վերադարձման 76.500.213 դրամը կամ ուսումնասիրությամբ չի հաստատվել 92.145.033 դրամ ԱԱՀ-ի գումար:

«Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ գանգատում մասնավորապես նշված է.

Արձանագրությամբ սահմանվել է, որ համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի վերջին պարբերության, ենթակա չէ հաշվանցման (վերադարձման) 92.145.033 դրամ ԱԱՀ-ի գումարը: Համապատասխանաբար չեն հաշվանցվել շինարարության և գովազդի՝ 92.145.033 դրամ ԱԱՀ-ի գումարը: Այդ գումարից 80.702.633 դրամը վերաբերում է շինարարությանը, իսկ 11.442.400 դրամը՝ գովազդի մասով ՀՀ պետական բյուջե հաշվանցված ԱԱՀ-ի գումարներին:

Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի վերջին պարբերության՝ «Հրոյական դրույքաչափով հարկվող գործարքների (գործառնությունների) իրականացման դեպքում ԱԱՀ վճարողների մոտ դրանց հետ կապված ձեռք բերված ապրանքների և մատուցված ծառայությունների գծով մատակարարների կողմից ներկայացված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերադարձման (հաշվանցման) սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով»: Ընդ որում, օրենքում չկա որևէ

կիրառելի բացառություն, որը թույլ կտար մերժել գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների հետ կապված շինարարական աշխատանքների կամ գովազդային ծառայությունների մասով ԱԱՀ-ի գումարների վերադարձը (հաշվանցումը):

Տվյալ դեպքում գովազդի մասով 11.442.400 դրամ ԱԱՀ գումարից 8.105.297 դրամը վերաբերում է <Ձվարթնոց> միջազգային օդանավակայանում և դրա անմաքս առևտրի խանութներում կատարված գովազդներին, որոնց մասով Ընկերության իրացումները հանդիսանում են ԱԱՀ գրոյական դրույքաչափով հարկվող գործարքներ: Ուստի համապատասխան 8.105.297 դրամ գումարը ենթակա է հաշվանցման գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների մասով:

Միաժամանակ, առավել քան ակնհայտ է, որ շինարարության նպատակով ձեռք բերված ապրանքները և ստացված ծառայություններն ուղղակիորեն կապված են ոչ միայն ՀՀ տարածքում Ընկերության կողմից ապրանքի իրացման գործարքների հետ, այլ առհասարակ Ընկերության կողմից ապրանքի իրացման բոլոր գործարքների հետ: Հաշվետու ժամանակահատվածում (ինչպես նաև բոլոր այլ հաշվետու ժամանակաշրջաններում) Ընկերության կողմից իրականացված իրացման գործարքների գերակշռող մեծամասնությունը կազմել են հենց արտահանման՝ ԱԱՀ գրոյական դրույքաչափով հարկվող գործարքները: Միաժամանակ, շինարարության նպատակով ձեռք բերված ապրանքները և ստացված ծառայությունները միանշանակ հանդիսանում են արտադրական և այլ առևտրային նպատակներով հանրապետության տարածքում հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված ապրանքներ և ստացված ծառայություններ, որոնց մասով ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերադարձման (հաշվանցման) <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր (և 16-րդ հոդվածի ուժով մեր դեպքին կիրառելի) կարգի համաձայն: Այսպիսով, գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների հետ կապված են հանդիսանում նաև շինարարության համար ձեռք բերված ապրանքները և մատուցված ծառայությունները: Ընդ որում, հատկանշական է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը նախկինում մշտապես մեկնաբանել և կիրառել է խնդրո առարկա նորմերը հենց մեր կողմից նկարագրված կերպով (ընդունելով համապատասխան շինարարական ծախսերի գծով ԱԱՀ-ի գումարների հաշվանցումը), որը հստակորեն արտացոլված է, օրինակ, վերջինիս կողմից 01.03.2012թ. կազմված թիվ 1206087 արձանագրության մեջ:

Հաշվի առնելով վերոգրյալն ընկերությունը խնդրում է ի փոխարինումն 31.05.2012թ. թիվ 1206922 Արձանագրության կայացնել նոր վարչական ակտ գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների մասով, որով կհաշվանցվեն (կվերադարձվեն) <Երևանի կոնյակի գործարան> ՓԲԸ կողմից <Ձվարթնոց> միջազգային օդանավակայանում և դրա անմաքս առևտրի խանութներում կատարված գովազդային գործարքների մասով 8.105.297 դրամ և համապատասխան շինարարական ծախսերի գծով 80.702.633 դրամ կազմող ԱԱՀ-ի գումարները (միասին՝ 88.807.930 դրամ ԱԱՀ-ի գումար):

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցիչների և ուսումնասիրությունն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ ընկերության գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ արձանագրության համաձայն, ենթակա չէ հաշվանցման (վերադարձման) 92.145.033 դրամ ԱԱՀ-ի գումարը: Այդ գումարից 80.702.633 դրամը վերաբերում է շինարարությանը, իսկ 11.442.400 դրամը՝ գովազդին:

<Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի վերջին պարբերության համաձայն. <Ջրոյական դրույքաչափով հարկվող գործարքների (գործառնությունների) իրականացման դեպքում ԱԱՀ վճարողների մոտ դրանց հետ կապված ձեռք բերված ապրանքների և մատուցված ծառայությունների գծով մատակարարների կողմից ներկայացված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերադարձման (հաշվանցման) սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով>:

Հանձնաժողովը գտնում է, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում իրականացված շինարարական աշխատանքների համար մատակարարների կողմից դուրս գրված

հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա չեն հաստատման, քանի որ չեն առնչվում նշված ժամանակահատվածում ընկերության կողմից զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների (գործառնությունների) իրականացման հետ: Մասնավորապես, նոր կառուցված հնեցման արտադրամասը ուսումնասիրվող ժամանակահատվածում զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների (արտահանված ապրանքների) հետ որևէ առնչություն չի ունեցել:

Ինչ վերաբերվում է <Ջվարթնոց> միջազգային օդանավակայանում և դրա անմաքս առևտրի խանութներում կատարված գովազդներին վերաբերող 8.105.297 դրամ ԱԱՀ-ի գումարին, ապա այն ենթակա չէ այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման, քանի որ այդ գումարի մեծ մասը վերաբերում է <Ջվարթնոց> միջազգային օդանավակայանի տարածքում իրականացված գովազդին, որը զրոյական դրույքաչափով հարկվող գործերին ըստ էության չի վերաբերում: Ինչ վերաբերում է օդանավակայանի անմաքս տարածքում գովազդի իրականացման վերաբերյալ ընկերության պնդմանը, ապա այն հիմնավոր չէ, քանի որ օդանավակայանի անմաքս տարածքում պարզապես իրականացվում է ընկերության արտադրանքի իրացման կազմակերպում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի վերջին պարբերության դրույթներով ուսումնասիրվող ժամանակահատվածում իրականացված շինարարական աշխատանքների, ինչպես նաև գովազդի գծով մատակարարների կողմից դուրս գրված հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա չեն այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը սովել է բացասական եզրակացություն:

Հանձնաժողովը, կրկին անգամ ուսումնասիրելով սույն գանգատին առնչվող նյութերն ու ապացույցները, ինչպես նաև հաշվի առնելով Գանգատարկման խորհրդի եզրակացությունը, գտնում է, որ ընկերության կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության 31.05.2012թ. թիվ 1206922 արձանագրության դեմ բերված գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

<Երևանի կոնյակի գործարան> ՓԲԸ կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության 31.05.2012թ. թիվ 1206922 արձանագրության դեմ բերված գանգատը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ